

Պարբերական բարձր յերկրների, միացիկ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՅՈՒՄ

Հասկանի շրջանային գործարար կամիակի

(Հաստատված է 15 մարտի 1938 թ. հախ. նիստում)

ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ

ՇՐՋԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՓԱՆ 1938 թ.

10 APR 2018

ပဏ္ဍိတဘိဝံသ ဘိဝံသ

ԵՄՔԱՆԻՈՂԱԴԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 ԳԴԳՄՇԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ
 ԳԴԴՄՈՒԴԱՐԱՆ

[illegible]

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՐՈՇՈՒՄ

ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՌԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱՆՈՆԵՐ

ՇՐՉԳՈՐԾԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆ 1938 թ.

«Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն առնեն վաղ կուսակցությունը, մեր բոլոր աշխատողներ՝ կուսակցականները յեվ անկուսակցականները, նկատի ունենալով, վոր անասնապահության պրորլեմն այժմ նույնպիսի առաջնահերդ պրորլետ է, վորպիսին եր յերեկ, արդեն հաջողությամբ լուծված է հացահատիկի պրորլետը:»

ՍՏԱԼԻՆ

(Կուսակցության 17-րդ համագումարում Համ Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի աշխատանքների մասին Տված զեկուցումից:)



Սոցիալիստական տնտեսապահության հետագա զարգացման, նրա բաժանման և վարակողան ցուցանիշների տպահովման, առցիռնալ կերակրման, խնամքի կտրի վերամշակման և բարձրագույն կարգավորումներ ստանալու, հիվանդությունները կանխելու և նրանց դեմ պայքարելու նպատակով, բոլոր կոլեկտիվներում և ֆերմաներում անհրաժեշտ կիրառել հեծելալ գոտանալու և անհրաժեշտ կանոններ:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԶՄՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ ՏԵԼԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Նոր կառույցվելիք գոմերի տեղի ընտրությունը կատարվում է հողբաժնի թույլտվությամբ հատուկ հանձնաժողովի կողմից կոլտնտեսության ընդհանուր ժողովի հաստատությամբ:

2. Գոմաշինարարությունը կատարել հողժողովոմատի կողմից հաստատված նա-

խաղժով դռների ներքին սարքավորումը
կատարել ըստ նախագծի և շրջանային
ավագ ղոռնեխնիկի ավագ անասնաբուժի
քուլցմունքներով: Գոմերի կառուցումը վեր-
ջացնելուց հետո, վերջինս պետք է ընդուն-
վի հատուկ հաճախաժողովի կողմից, վորից
հետո միայն կարելի չե նրան ոգտագործել:

3. Արգելել բնակելի և այլ շենքերի
կառուցումն աչն տերիտորիայի վրա, վորը
հատկացրված է գոմաշինարարության և
նրան սպասարկող այլ տնտեսական շեն-
քերի համար:

4. Անասունները տեղավորելու նպա-
տակով այլ շենքերի հարմարեցումը թույ-
լատրվում է միմիայն նախորոք աչդ շենքի
ախտահանումը կատարելուց հետո:

5. Ծինն ընդունելու համար չուրա-
քանչյուր ֆերմայում ունենալ հատուկ
բաժանմունք ծնարան:

Ծնարանները մասսայական ծնի նախոր-
յակին չենթարկել հիմնական մաքրման և
ախտահանման, իսկ անասունների յուրա-
քանչյուր ծնից հետո ծնի վայրը նմանա-
պես չենթարկել ախտահանման:

6. Նախքան արտաշին շրջանից մը-

սուրալին շրջանին անցնելը, բոլոր շեն-
քերը վերանորոգել, ախտահանել և տաքա
ցընել (պատերի սվաղումը, կտուրների
ծածկումը, պատուհանների ապակի գցե-
լը և այլն):

7. Հիվանդ և կասկածելի անասուն-
ներին մեկուսացնելու և նրանց բուժելու
համար ունենալ հատուկ մեկուսարան:

Մեկուսարանները պետք է լինեն գոմե-

Մեկուսարանները պետք է լինեն գոմե-
րից, ճանապարհներից, ջրերից և բնակելի
շենքերից վոչ պակաս 300 մետր հեռավոր-
ության վրա և կառուցված լինի աչն-
պիտի տեղ, վոր տարվա ընթացքում քամի
ների ողողությունը լինի գոմերից
դեպի մեկուսարան:

Բոլոր անասնագոմերը պետք է կահա-
վորվի մսուրներով, հորթերի վանդակներով
ողավոխության խողովակներով կապերով
և անհրաժեշտ անասնապահական գույքով
այն և դուլներով բահերով չեղաններով
խողանակներով, քերիչներով (ապտեր-

ներով) Զեմաչափներով, լվացարաններով, սրբեֆներով, գոգոնոցներով:

8. Յուրաքանչյուր կոլտնտեսութուն պետք է ունենա գոմաղբը պահպանման հատուկ վայր ուր պետք է կուտակվի և պահպանվի ամբողջ գոմաղբը:

9. Նախքան մսուրային շրջանն անցնելը բոլոր տեսակի անասուններին յինթարկել զոո-անասունաբուժական ստուգման:

ա) թուլ և նիհար անասուններին առանձնացնել և ուժեղացնել նրանց կերակրումն ու խնամքը:

Մաշկի հիվանդութիւնն ունեցող անասուններին (եկզեմա, քոս մկնատամ) առանձնացնել և կանոնավորել նրանց կերակրումն ու բուժումը:

Բոլոր անասնապահական կոլտնտեսներմաներում անասուններին յինթարկել անասնաբուժական մշակման տուբերկուլոզ և բրուցելլոզ (վարակիչ բիժում) ու խլադթ (սապ) հիվանդութիւններին նկատ-

ածմը: Հայտնաբերված հիվանդ անասուններին անմիջապես առանձնացնել, վորոնց նկատմամբ խստորեն կիրառել զոո-անասնաբուժական պարտադիր միջոցառումները:

Պարտադիր կարգով բոլոր կոլտնտեսութիւններում գոմերից բնակելի շենքերից, ճանապարհներից և հոսող ջրերից 400 մետր հեռավորութիւն վրա ունենալ անասնագերկմանոցներ համաձայն անասնաբուժական պահանջների:

12. Անասունները գոմերում դասավորելու ընթացքում կատարել հետևյալ խմբավորումները:

ա) Խոզոր լեղջուրավոր անասուններին նկատմամբ՝ արտադրողների խմբակ, կովերի լերինջների խմբակ, 1-2 տարեկան եզմատղաշների, 1-2 տարեկան վորց մատղաշների և մինչև 1 տարեկան մատղաշներ խմբակ անպայման 6 ամսական հասակից առանձնացնելով եզերը վորցերից:

բ) Մանր լեղջուրավոր անասունների նկատմամբ խմբակներ խոյերին (առանձնացնելով ցեղականը տեղականից) մաքրիների ծածկված շիշակների և վորց ու եզ մատղաշների, վորտեղ հոտի քա-

նակը համապատասխանում է:

դ) Ոտոգերի նկատմամբ՝ վարադներն առանձին վանդակներում, մայրերն առանձին վանդակներում, 4-9 ամսեկան եգ մատղաշների և 4-9 ամսեկան վորց մատղաշներին առանձին վանդակներ, չուրաքանչյուրում 4-6 գլուխ, և 2-4 ամսեկան եգ և վորց գոձիներ առանձին վանդակներ չուրաքանչյուրում 8-10 գլուխ:

դ) Զիերի նկատմամբ. բանող ձիերի հովատակների և զամբիկների խմբեր: Բոլոր տեսակի մետիս և տոհմալին անասունների մոտորձատումը կատարել հատուկ գոտանաանաբուժական հանձնաժողովի միջոցով: Խտիվ արգելելով ցեղական նշանակություն ունեցող անասունների մոտորձատումը:

13. Բոլոր ցեղական մետիս անասուններին հատկացնել բարեկարգված գոմեր, նրանց սպասարկումը հանձնարարել փորձված և հմուտ անասնապահներին, ապահովելով նրանց կերակրումը լրիվ չափով և բարձրորակ կերով:

Արգելիլ անասունների մորթը գոմերում և մսի ոգտազործումը կատարել մի-

միայն անասնաբուժի թուղտվությամբ:

14. Տնտեսության մեջ նոր ստացված անասունները չենթարկվում են կարանտինայի վոչ պակաս 15-որից, իսկ ձիերը և խոզերը՝ 21-որից:

Կարանտինայի համար հատկացվում է հատուկ շենք և հատուկ արտոսմասեր: Կարանտինայում գտնված ժամանակամիջոցում անասուններն չենթարկվում են անասնաբուժական ստուգման, այն է, ձիերը չենթարկվում են մալեյնիզացիայի խոշոր լեղջուրավոր անասունները տուբերկուլինիզացիայի, վոչխարները խոզերը և խոշոր լեղջուրավոր անասունները՝ բրուզելլիոզի դեմ:

15. Կարանտինայի ժամկետը վերջանալուց և անասնաբուժական ստուգումից հետո, հիվանդության բացակայություն գեպքերում անասուններին կարելի է խառնել ընդհանուր նախրին: Կարանտինայի մեջ գտնվող անասունների սպասարկման համար պետք է նշանակել հատուկ սպասարկող անձնակազմ, առանձին ջրեղատեղ և ինվինտար:

16. Այն անձինք, վորոնք սպասար-

կում են կարանտինացի մեջ գտնվող անասուններին, իրավունք չունեն մտնելու տնտեսութեան գոմերը և անասնապահութեան պահեստները:

17. Անասուններին դուրսի ճրջակա քիչ դուրս բերելու դեպքում (չուկա տունավաճառ, ցուցահանդես և այլն) կոլտնտեսութեանը կոլտնտեսականները կամ մենատնտեսները պարտավոր են անասնաբուժից վերցնել վկայական ավել ուրնտնտեսության կամ վաչրի վարակիչ հիվանդութիւններէ պաշտպանել լինելու մասին:

18. Կոլտնտեսութեան ֆերմաներում և կոլտնտեսականների մենատնտեսների, անասունների մեջ միանման նշաններով հիվանդութիւն չերիվալու կամ մի քանի անասունների հանկարծակի անկման դեպքում հիշյալ տնտեսութեան գեկավարները պարտավոր են անմիջապէս կանչել անասնաբուժին հիվանդութեան բնույթը վերոնշարտ (դիագնոզ) և միջոցներ ձեռք առնելու համար:

Հիվանդ կենդանին անմիջապէս առանձնացվում է հոտից և ուղարկվում մեկուսարան:

Հիվանդ կենդանու տեղն անպայման ախտահանել, աղբը և ցամաքը անվարել, շարված մնացորդները թաղել հողում:

19. Ստակած անասունների դիակներն անմիջապէս տեղափոխել անասնապահութեան: Վիժվածքները, պտուղը, ընդերքը և հորթների դիակները դրվում են առանձին տեղ, մինչև անասնաբուժի գալը և դիակները կատարելը:

20. Դիակների փոխադրման համար ունենալ հատուկ սալակներ, թիթեղապատ արկղներով, սալակն ախտահանել չուրաքանչուր ոգտագործումից հետո:

21. Այն վարերում վարակել կա վոչխարների քոս հիվանդութիւն, գարնանը և աշնանը կատարել հակաքոսային կրկնադողացում, լողացման լինթարկել նաև հոտի շները (անասնաբուժի մասնակցութեամբ):

22. Տնտեսութեան նոր մուտք գործող բոլոր շներին պահել կարանտինայի տակ 15 օր և կատարել ճիշդաթափում, վոչխարների գոմում շների միակը չի թույլատրվում:

23. Խլախտով և Սապով կասկածելի

ձիերին հայտնաբերելուց անմիջապես ուղարկել խլախտային տնտեսություն և պահել մեկուսացված:

24. Բոլոր անասնապահական վերձայները պետք է ունենան անասնաբուժական դեղորայքներ, դեղորայքի ոգտագործման կանոններով:

ԿԱԴՐԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ստուգել անտանապահության բնագավառում աշխատող բոլոր կադրերը և կատարել համապատասխան ամրացումներ ստուգված, զործին նվիրված և փորձված աշխատողներին:

1. Անասուններին ձմեռվա կերով ապահովելու նպատակով ըստ կոլտնտեսությունների շրջանային դոդալերսոնալի կողմից կազմվում է կերի բաղանալ կերի բաղանները պետք է հաստատվեն կոլտնտեսության վարչությունների և ընդհանուր փողովների կողմից:

Ըստ կերի բաղանալի բոլոր տեսակի կերերը համապատասխան տկտով հանձնելում է ֆերմալի վարիչին. վորը պատասխանատու չե ալդ կերերի պահպան-

ման և ուսցիոնալ ոգտագործման համար:

2. Անասուններին ջրելու համար լուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է ունենա սարքավորված ջրելատեղ:

3. Վորպես կանոն բոլոր տեսակի հղի անասունները պետք է ջրվեն գոմում 10-12 աստիճան վոչ պակաս ջերմություն ունեցող ջրով:

4. Բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել պալքար կորուստների դեմ և ձեռնարկել հակահրդեհային բոլոր տեսակի միջոցառումները ապահովելու գուլքի պահպանումը:

Յելնելով տեղի պալմաններից լուրաքանչյուր ֆերմալում դոդալերսոնալի կողմից մսուրային շրջանի համար մշակվում է գոմի ներքին կարգապահություն կանոններ, հաստատված ֆերմալի արտադրական խորհրդակցության կողմից:

Ներքին կարգապահության կանոնները մշակելիս հիմք ընդունել աշխատանքների հաջորդականությունը:

Ա. ԽՈՇՈՐ ՅԵՂՋՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Առավոտը գոմաղըը դուրս բերել գոմից, գոլ ջրով լվանալ կթվող կովերի կուր

ծը և չորացնել, կթել, ափսուհեմ անցնել
կերակրմանը, սկզբում տալ խտացրած կե-
րերը, ապա ջրել, հետո հլութալի կերերը,
խսկ վերջում խոտ, կերակրելուց հետո անց
նիլ անասունների և գոմի մաքրմանը:
Հանգիստ մինչև վեց: Կեսօրին խոտ,
հանգիստ, ջրել, մաքրում կիթ, կերակրու-
մը նույն հերթականությամբ:

Բ. ՎՈՋԻԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԾԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Առավոտյան կերակրել, ապա գոմը
մաքրել, նույնը չերկոյան:

Գ. ԽՈՋԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Առավոտյան խոզանոցի և վանդակ-
ների մաքրումը և կերերի պատրաստումը,
կերակրում, ջրում, հանգիստ կեսօրին և
չերկոյան նույն ինչ վոր առավոտյան լավ
չեղանակներին կեսօրին զբոսանք:

ԶԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Առավոտը ջրել, խտացրած կերով կե-
րակրել, ապա խոտով: Թիմարում, գոմի
մաքրում, հանգիստ կամ աշխատանք:

Կեսօրին տրվում և միմիայն խոտ,
չերկոյան նույն ինչ վոր առավոտյան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արգելել բանոց
ձիերի խնամքը և պահպանումը նույն գո-
մում վորտեղ տեղավորված են հզի դամ-
բիկները:

5. Անասնաշենքեր պետք և պահպանել
մաքուր, գոմադրը սահմանված ժամերին
դուրս բերել գոմից, ստուգել ողանցքների
նորմալ աշխատանքը, և անասունների
կանգնելատեղը փոխել չոր ցամաք:

6. Գոմերում պահպանել նորմալ ջեր-
մաստիճան (8-10 աստիճան) խոզանոցում
և հորթանոցում 12-14 աստիճան, ծնարան
ներում 15-18 աստիճան:

7. Առանց ֆերմայի, վարիչի թույլա-
տվությամբ արգելել կողմնակի մարդկանց
մուտքը գոմերի:

8. Բոլոր տեսակի հզի անասունները
ծնելուց 15-20 օր առաջ տեղափոխել ծնա-
րան, ապահովելով նրանց կերակրումը լա-
վորակ կերով: Պատիվ արգելել հզի անա-
սուններին ծնելուց 2 ամիս առաջ սխիստով
և սառած կերով, կերակրելը սառը ջրով
ջրելը:

9. Հզի անասունների խնամքն ու կերա-
կրումը հանձնարարել փորձված և վստա-

հելի անասնապահներին:

10. Կտրականապես արգելվում է կենդանիների վարակիչ հիվանդություններով անապահով վայրերից և տնտեսություններից կերեր ներմուծել առանց անասնաբուժի թույլատվության:

11. Արգելվում է անասնակերը պահել մարդկային զուգարանների և միջանորբերի մոտ ու անասնաշենքերում:

12. Արգելվում է անասուններին ջրել կեղտոտ և չհստոյ ջրերով:

ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՐԱ ԿՐՈՒՄԸ

1. Ծինն ընդունում է փորձված և գործը տիրապետող հմուտ անասնապահը, կիրառելով պահանջվելիք զոովիտ կանոնները:

2. Վիժումների դեպքում ցամաքը բոլոր տեսակի արտաթորույթներով պետք է անմիջապես այրվեն կամ հորվեն, իսկ աչն վայրը, վորտեղ տեղի չի ունեցող վիժումը անհրաժեշտ է ախտահանել թանձր կրչալինով կամ թարմ մարած կիրով:

3. Վիժած անասուններին անմիջապես պետք է փոխադրել ընդհանուր ծնարանից մեկուսարան:

4. Դնարաններում սահմանել ցերեկվա և գիշերվա հերթապահություն:


5. Ծնից անմիջապես հետո պետք է ճեղացվի և խորը թաղվի ընդերքը (ծինը) խոտիվ արգելել ընդերքի կերակրումն ընդին, խողերին և թոշուններին:

6. Հղի անասունների նկատմամբ սահմանել հատուկ հսկողություն թույլ չտալով նրանց անց ու դարձը ցեխոտ և սառած ճանապարհներով:

7. Հղի անասունների գոմից դուրս և ներս բերելը պիտի կատարվի մաս մաս վորպեսզի դառն մոտ չստեղծվի կուտակում և հրում:

8. Ծնից մեկ և կես ամսից 2 ամիս առաջ հղի կովերի կիթը պետք է աստիճանաբար դադարացնել:

9. Նորածին հորթերը տեղափոխվում են անհատական վանդակներում և մինչև 10-12 օրվա հասակը կերակրվում են զուտ խր մոլը կաթով: Տուրերիկիլող և բրուցելյող հիվանդություններով տառապող կովերի ծինը ընդունվում է առանձին ծնարաններում: Այդպիսի կովերից ստացված հորթերը կերակրվում են ճեղքից առողջ կովի



կաթով: Միայն նույն ժամանակամիջոցում
ծնած առողջ կով չլինելու դեպքում թույ-
լատրվում է կերակրել հիվանդ կովերի հոր-
թերին իրենց մոր կաթով միմիայն առա-
ջին 10-որվա ընթացքում:

10. Նորածին գառները առաջին 3-4
որվա ընթացքում տեղավորվում են մոր
հետ առանձին բաժանմունքում (Դեննի-
կում):

11. Նորածին գառները առաջին 3-5 օրը
պահվում են խմբով կերակրող մայրերի
հետ միասին:

12. Խոճկորները պահվում են առան-
ձին արկղում և թողնում են ծծելու յու-
րաքանչյուր 2-3 ժամը մեկ անգամ:

13. Չեռքից կերակրվող հորթերի կա-
թի ջերմաստիճանը պետք է լինի 36-38
աստիճան:

14. հորթերին խիժ կաթով (գալ) կե-
րակրելը չուհմանափակել և տալ որական-
մի քանի անգամ 2-3 ժամ ընդմիջումներով:

15. բոլոր նորածին հորթերին մինչև
մեկ ամսեկան հասակը ապահովել դնչկալ-
ներով:

16. հորթերին 30 օրվանից սկսած սո-

ռլ'յ'նիլ ոժանդակ կերերի, որական տա-
լով լավորակ խոտ մանրացրած վիճակում
և ուժեղ կերերը ջարդված վիճակում:

17. խտացրած կերերի հետ միասին
պարտադիր կերպով տալ նաև վոսկրալյուր
կավիճ և սովորական աղ 15-20 գրամի չա-
փով:

18. Խոճկորները 10-օրական հասա-
կից լրացուցիչ կերպով ստանում են հա-
տիկային կեր: Նույնը մտրուկներին 3 ամ
սեկան հասակից չեթե հնարավոր է:

19. մատղաշների կերակրման բոլոր
տեսակի ամանները պետք է լինեն մաքուր
և կերակրելուց առաջ լվացված յեռոդ ջրով
և չորացված:

20. կաթնային կերակրման շրջանն
անցնելուց հետո բոլոր տեսակի մատղաշ
անասունները պետք է տրվեն ռացիոնալ
կերակրում, նրանց նորմալ աճը և զարգա-
ցումն ապահովելու համար:

21. Գոմերին կից ունենալ մանեժ
զբոսավայր լավ լիզանալիներին մատղաշ
ներին զբոսանքի հանելու համար:

22. մատղաշները միշտ պետք է ապահո-
ված լինեն մաքուր և չոր ցամաքով և

վանդակները պահել մաքուր վիճակում:

23. Յուրաքանչյուր 10 որը մեկ անգամ մատղաշներին վանդակները ախտահանել և սպիտակացնել:

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՏԻԶԱՅԻԱ

1. Հաշվի առնել ըստ զինհրտցիայի բոլոր տեսակի ցեղական արտադրողներին և կատարել զուգավորման յենթակա մայրական կաղմի կցում այն հաշվով, վորպեսզի ապահովվի պետական առաջադրանքի կատարումը (պլանը):

2. Զուգավորման կամպանիայի նախորդակին բոլոր տեսակի արտադրողներին ստուգել բրուցելոյ և տուբերկիլոյ հիվանդությունների նկատմամբ:

Բրուցելոյով կամ տուբերկիլոյով հիվանդ տեղական արտադրողներին հանձնել մսամթերման, իսկ ցեղականներին ոգտագործել միմիայն նուլնանման հիվանդ անասունների համար:

3. Բոլոր տեսակի արտադրողներին սերմը պարտադիր կերպով ստուգել և ցած բորակ սերմ տվող արտադրողների նկատմամբ ուժեղացնել կերակրումն ու խնամ-

քը՝ Զուգավորման համար ոգտագործել միմիայն բարձրորակ սերմ տվող արտադրողներին: Ոգտագործման թուլատրված բոլոր ցուլերի նկատմամբ պետք է լինեն համապատասխան ակտեր:

4. յուրաքանչյուր արտադրողի համար սահմանել հետևյալ բեռնվածությունը:

ա) Յուլերին ... 60-70 գլուխ (ձեռնախաշ)

բ) Հովատակներին . . 30-40 « »

գ) Արտադրող եղերին 20-25 « »

դ) Խոյերին . . . 30-40 « »

ե) Վարազներին ... 15-25 « »

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յերիտասարդ արտադրողներին աշխատանքի առաջին տարին բեռնվածություն սահմանել նորմայի 50 տոկոսի չափով:

5. Կոլտնտեսութան վարչությունը պարտավոր է կոլտնտեսականների անհատական ոգտագործման տակ զտնված անասունները ապահովել արտադրողներով:

6. Այն կոլխոզներում վորտեղ ապահոված է ցեղական ցուլերով արգելել տեղական ցուլերի ոգտագործումը:

7. Զուգավորման համար սահմանել

Հետեւյալ հասակը՝ ցուլերին 2 տարեկանից, չերիջներին 20 ամսեկանից 3 տարեկան, հովատնեկաններին և զամբիկներին 3 տարեկանից, արտադրող և եզ եշերին 3 տարեկանից, վարազներին 9 ամսեկանից, խոյերին և շիշակներին 1 ու կես տարեկանից:

8. Թւոր տեսակի արտադրողներին անհրաժեշտ է ապահովել խտացրած և լաւ ձորակ կոպիտ կերով, իսկ զուգավորման կամպանիայից մեկ ու կեսից 2 ամիս առաջ ուժեղացնել նրանց կերակումը:

9. Սեռական հասունութիւն ունեցող զերիջները պետք է կցվեն կովերի նախրին ձորպեսզի ապահովի նրանց ժամանակին զուգավորումը:

5. ԱՐՇԵՍԱԿԱՆ ՍԵՐՄԱՎՈՐՈՒՄ

1. Արհեստական սերմնավորման կաշանները պետք է կառուցել վարակիչ հիվանդութիւններից զերծ անասնութիւններում, վորոնք կապահովեն կալանի բնութեամբութիւնը մանր չիղջուրավոր անասունների համար 1500 գլխից, կալաններում պետք է սերմնավորվեն թե կոլտնտեսու-

թիւնների և մենատնտեսների անասունները:

ԹԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ.— Բրուցեկուզով և տուբերկուլուզով վտանգված անտեսութիւններում թուլատրվում է բանալ սերմնավորման կայան այն պայմանով վոր հիշյալ հիվանդութիւններով հիվանդ անասունները սերմնավորվեն յենթակայաններում առողջ արտադրողների սերմով, վերջինս պետք է ձեւակերպվի համապատասխան ախտով շրջանային անասնաբուժի անմիջական մասնակցութեամբ:

ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼԸ

1. Անասունների խմբավորումը և քրիզազների կազմը որոտային շրջաններ կացկացնելիս թողնվում է հոտերի կոմպլեկտավորման նույն սկզբունքն, ինչպես կազմված է չեղել մուրալին շրջանում:

2. Չորտեխնիկի և անասնաբուժի անմիջական մասնակցութեամբ կոլտնտվորչութիւնը, նախքան անասունների արտալին շրջանն անցնելը, կատարում է որոտների բաշխում ըստ անասունների տե-

աւակները և բրիգադները:

3. Յուրաքանչյուր բրիգադայի հատկաց-
րած արտավայրի ռացիոնալ ոգտագործ-
ման համար իր հերթին բաժանվում է
մասերի հերթականորեն արածա-
ցնելու նպատակով այն հաշվով վոր չու-
րաքանչյուր արտամասում տվյալ բրիգա-
դայի անասունները մեան 10 որդից վոչ
ավել:

4. Կատեգորիկ կերպով արգելել ա-
նասունների վաղ գարնան արածացնելը,
թուլատրելով այդպիսին միմիայն այդ դեպ
քում, յերբ արտավայրերում խոտի բար-
ձրութիւնը լինի վոչ պակաս, քան 10
սանտիմետրից:

5. Արգելել անասունների վաղ առա-
վոտյան արածացնելը, մինչև ցողի վերա-
նալը:

6. Շոգ չեղանակներին կետորվա պա-
հին անասուններին տալ հանգիստ ուժե-
ղացնելով դիշերվա արածացումը:

7. Կանոնավորել ջրելատեղերը և կար-
գի բերել ջրելատեղ տանող ճանապարհնե-
րը խոտիվ արգելել ճահճացրած, վոչ հո-
տուն ջրերով անասունների ջրելը:

8. Նախքան անասունների արտա-

յին շրջանին անցնելը, բոլոր արտաները
չենթարկվում են ստուգման, մաքրվում են
դիակներէց, թափթփված վոսկորներից և
կեղտից: Կատարվում է ջրելատեղերի մաք-
րում և սահմանվում է հատուկ հսկողու-
թիւնն արտավայրերի և ջրելատեղերի
վրա:

9. Վարակիչ հիվանդ անասունների
համար առանձնացնել հատուկ արտամաս
առանձին ջրելատեղով, այն հաշվով, վոր-
պեսդի հիվանդ անասունները չանցնեն
սոողջ անասունների արտամասով և
նրանց հետ շվում չունենան:

10. Արտաւային շրջանին անցնելուց
մոտ մեկ ամիս առաջ պետք է հովիվներին
ծանոթացնել անասունների արտաւային
շրջանի հիվանդութիւնների, առաջին ոգ-
նության, վնասակար և թունավոր խոտե-
րի, արտաների ոգտագործման տեխնիկայի
և այլի հետ:

11. Նախքան անասուններին արտա-
թողնելն անհրաժեշտ է՝

ա) Վողջ անասուններին չենթարկել
զոո-անասնաբուժական քննության:

բ) Բոլոր հիվանդ և կասկածելի ա-
նասուններին առանձնացնել մեկուսա-
րում կամ հատուկ առանձնացրած արտ-

առաջադրում:

դ) Կտրակի և մաքրել ձեռքերը, կոշիկները և սուր լեղջուրները:

դ) Մաքրել բոլոր խաղողի լեղջուրները մաշկային բոռից:

12. Առանց անասնաբուժի վկայակա-
նի վոչ մի անասուն չի թույլատրվում
յլադ տանել:

13. Ձի թույլատրվում անասունների
արածացնելը բանող ճանապարհների և
անասնագերեզմանոցների մոտ ինչպես և
անասնաբուժական հսկողութիւն կողմից
անապահով հալտարարված վայրերում:

14. Քոչվորների անասունները յեն-
թարկել անասնաբուժական մշակման: Քոչ
պուշկտերում և ապա նոր թողնել յեյլադ
քարձրանալու:

15. Բրեզադերները կամ ավագ հովիվ
ներին իրենց ճանապարհին ընկած բնա-
վազյոթերի անասնաբուժական օանիտարա
կան տեսակետից ապահով լինելու մասին
գյուղխորհրդներից և անասնաբուժներից
պարտավոր են վերցնել տեղեկանքներ:

16. Կենդանիների ճիճվային հիվան-
դութվածներից գերծ պահելու համար ճա-
շիճային արտաներն անհրաժեշտ և չորաց-

նել՝ առանցքի փոքելու միջոցով:

17. Վոչխարների թոքային ճիճունե-
րով վարակված գլուղներում ահհրաժեշտ և
սահմանել արտաների արածացման թիստ
հերթականութուն: Յուրաքանչյուր արտ-
առաջարկում վոչխարներին պետք և արա-
ծացնել 5-6 որից վոչ տվել, իսկ նրանց
նույն արտառաժանում կարելի չի արածաց-
նել 3 ամսից վոչ շուտ: Նույն արտառաժա-
սում ալ տեսակի անասուններին արածաց
նելը թույլատրվում և:

18. Փարնանային և ամառային շըր-
ջաններում կենդանիների տիգերը և բոռի
թրթուռները հավաքել և վոչնչացնել: Ա
մառը, ցերեկվա կթի ժամանակ սիստեմա-
իկարար ստուգման լենթարկել վոչխար-
ներին, նրանցից վիրավորներին (վորդ ա-
ռաջացածներին) ջոկելու և բուժելու հա-
մար:

ԱՆՍՍՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Անասունին ոգտագործողից ընդունե-
լիս անասնապահը պարտավոր և մանրա-
մասն գննել կենդանուն և վորելի տոր-
վածք, հարված կամ ալլ հիվանդութուն-
ների ու պակասութուններ նկատելու դեպ
քում անմիջապես ղեկուցել ալլ առթիվ:

բրիգադերներին համապատասխան բուժ-
միջոցներ ձեռք առնելու համար:

2. Աշխատող անասուններին պետք է
տալ շաքաթվա մեջ մեկ որ հանգիստ: Հիմ
նական գլուղատնտեսական աշխատանքնե-
րը սկսելուց առաջ տալ տեփողական հան-
գիստ 10-15 որ: Թուլ և հյուժված կենդա-
նիներին տալ հանգիստ մինչև կազդուրվե-
նալ:

3. Ամբողջ զուգավորման կամպան-
իայի նախապատրաստման և նրա անցկաց
ման ընթացքում արգելվում է ոգտագոր-
ծել աշխատանքի մեջ արտագրող հովատակ
ներին (վորոնք առանձնացրված են զու-
գավորման համար) և զամբիկներին: Բանող
ձիերի և ջորիների հանգիստը ձիավորների,
ձիապահների և անասնապահների աշխա-
տանքը գնհատվում է քաշող ուժի առող-
ջության ստուգման արդյունքներով:

8. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԶՈՈԶԱՇՎԱՐԿ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքների ճիշտ կազմակերպ
ման և զոտոտեխնիկական հաշվառումը լավ
հիմքերի վրա դնելու համար բոլոր կոխո-
ղային անասնապահական ֆերմաներում
պարտադիր կերպով ունենալ հետևյալ

հաշվառման ձևերը:

ա) Զուգավորման մատյան, բ) ամե-
նորյա կաթի գրանցումների մատյան,
գ) մատղաշների աճման մատյան, դ) մայ-
րերի գիրք 4 արտագրողների քարտեր:

2. Դրանցումների սպուգումը և ցուց
մունքներ տալը կատարվում է ղոռպերսո-
նալի կողմից:

3. Խոշոր ֆերմաներում վորտեղ ֆեր-
մայի վարիչը հնարավորութունն է ունի
կատարելու գրանցումները կոլխոզի վար-
չության կողմից, նշանակվում է հատուկ
հաշվառ:

4. Յուրաքանչյուր ծին անկում վի-
ժում, խոտանում և վաճառում պետք է
ձևավակերպի համապատասխան ակտով և
ստորագրվի կոլխոզի նախագահի ֆերմա-
յի վարիչի կողմից:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

1. Աշխատանքի կազմակերպումը կոլ
խոզային ապրանքային ֆերմաներում
անցկացնել համաձայն գոյություն ունե-
ցող աշխատանքի կազմակերպման հրահան
գով:

2. Լայն ծավալել սոցմրցումը, հար-

վաճախնությունը և ստախանոմյան մեթոդ-
ների կիրառումը արտադրության մեջ և
առաջավորների փորձը դարձնել կելխոզա-
յին ֆերմաների անասնապահների սեփա-
կանությունը:

3. Անասնապահության բնապատկերում
աշխատակիցներին վորակավորելու և նը-
րանց տեխնիկական մակարդակը բարձրաց-
նելու համար, կազմակերպել զոոխմբակներ
արտադրության մեջ կիրառել զոո-անաս-
նաբուժական միջոցառումների ստուգման
աջիտորների ճիշտ հաշվառումը և նրանց
ժամանակին գրանցումները գրքույկնե-
րում:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԿԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿՈՆՏՐՈԼԸ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն կանոնների կիրառման պատա-
խանատվությունը դնել կաթ ապրանքա-
յին ֆերմաներում կոլտնտեսականների
ֆերմայի վարիչներին, անասնապահական
բրիգադիւրների և դաշա. բրիգադիւրների
վրա, իսկ ինչ վերաբերվում և անհատա-
կան ոգտագործման տակ յեղած անասուն-
ներին կանոնների կիրառման պատասխա-
նատվությունը ընկնում և անասնատերերի:

Կոլտնտեսականների և գյուղխորհուրդների
նախագահների վրա:

Սույն կանոնների կիրառման ղեկա-
վարությունը և հսկողությունը դրվում և
շրջ. հոգրածին, անասնաբուժական և զոո-
տեխնիկական անձնակազմի վրա:

3. Յուրաքանչյուր անասնապահական
կոլտնտեսություն ֆերման և գյուղխորհուրդը
պետք և ունենա գոտայերառնալի այցելու-
թյան գիրք, վորտեղ պիտի գրանցվի գի-
տողություններ անասնապահության գրու-
թյան մասին, անասնաբուժական կանոն-
ների կիրառման անհրաժեշտ միջոցառում-
ների և վերջիններս կատարման մասին
նշումներ:

Սույն կանոնները չկատարելու համար
մեղավորները յեթարկվում են վարչական
տուժի կարգով տուգանքի մինչև 100 սուբլի
կամ վորպես որենք խախտողների կանչ-
վում են պատասխանատվություն:

Սույն վորոշուման հսկողությունը
դրվում և մի վարչություն վրա:

ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳՍԶԻ ՊԱՇՏՈ

ՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ՊԱՊՅԱՆ

ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԲԱՐԱՄՅԱՆ

Գլավխիտի շրջակայի Ս—Պ 58 Տիրած 200
Հանձնված է արտադրության 25 հունիսի 1938 թ.
Ստորագրված է տպագրվելու 10 հունիսի 1938 թ.
Շրջադրծկոմի տպարան Դափան

ՀԱՅԿԱՅԻՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL1016874

1

4450

ՇՐՋՊՐԾԿՈՄԻ ՏՊԱՐԱՆ, ՂԱՓԱՆ